ԳԼՈՒԽ ԺԳ.

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ — ԲԱՇ-ԱԲԱՐԱՆ

Այսպէս էր կացութիւնը Արարատեան դաշտում, երբ, Ալեքսանդրապոլի անկումից յետոյ, հայկական բանակի մի մասը նահանջեց Երեւանի ուղղութեամբ և կուռվ հասաւ Սարդարապատ, մայիս 19-ին: Թիւրքերը նրանց հետապնդեցին երկու ճանապարհով՝ երկաթուղու ուղղութեամբ և Արագածի հիւսիս-արևելեան փէշերով:

Դրանից առաջ արդէն, Արարատեան դաշտում համախմբուած էին և Վանի ու Ալաշկերտի շրջաններից նահանջած զօրամասերը: Ապրիլի կէսերին Երեւանեան նահանգում, հայկական 2րդ դիվիզիայի պետ զօր. Սիլիկեանի հրամանատարութեան տակ, գտնուում էին 5րդ և 6րդ գնդերը, 4րդ գնդի մէկ գումարտակը և Վանի առաջին ու 2րդ գնդերը, 28 թնդանօթով:

Վանի երկու գնդերը, որոնք դրաւում էին Բարթողեան բարձունքները, ապր. 27-ին ենթարկուեցին յարձակման թիւրքերի կողմից, որոնք, հակառակ կնքուած զինադադարի, փորձեցին ա'յս կողմից խուժել Արարատեան դաշտը: Հայկական զօրքերը ցոյց տուին բուռն դիմադրութիւն: 2րդ գունդը նահանջեց մինչև Օրդով և Արհաջ, բայց յաջորդ օր անցաւ ուժեղ հակայարձակման և արիւնահեղ ճակատամարտից յետոյ՝ յետ շպրտեց թշնամուն: Սակայն, թիւրքերը ստացան օգնական ուժեր և յետ մղեցին հայկական զօրամասը, որը ամրացաւ Խալֆալու-Սուլթանապատ գծի վրա: Կռիւները տեւեցին մօտ երկու շաբաթ: Այս կռիւներում մերոնք ունեցան մի քանի տասնեակ սպանուած և 80 վիրաւոր: Մայիս 9-ի ճակատամարտում, հերոսական մահով մեռաւ և Վանի 2րդ գնդի հրամանատար սիրուած գնդ. Լեւոն Զարուխեանը՝ հայ լաւագոյն զինուորականներից մէկը:

Ի վերջոյ, անդրկովկասեան կառավարութեան եռանդուն բողոքի վրա թիւրքերը նորից քաշուեցին Զինդիլի միւս կողմը: Հայկական զօրքերը տեղաւորուեցին Իգդիրում՝ Օրդովում ունենալով առաջապահներ: Միւս թեւը Սարդարապատ կայարանում էր՝ Կողբի առաջապահներով: Մի մաս էլ դրուած էր Արաքս կայարանում: Այսպէս մնաց դրութիւնը մինչև մայիս 15, երբ թիւրքերը դիմեցին ընդհանուր յարձակման Ալեքսանդրապոլի և, Զինդիլի վրայից, Երեւանի ուղղութեամբ և յետ մղեցին մեր զօրքերը Իգդիրից ու Կողբից մինչև Արաքս: Միաժամանակ, ոտքի ելան թուրքերն ու քրդերը, և 1918թ. մայիսի կէսերին Արարատեան դաշտը բոլոր կողմերից շրջապատուեց թշնամիներով: